

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Ամիլէս Ապոստոլովիչ Կունդորով և եղբ. անունով Տաթևի շրջանի Կաւարտ գիւղի ծխական դպրոցի շէնքն իրենց ծախքով շինելու և նոյն դպրոցի պահպանութեան տարեկան ծախքը հոգալու համար։ 10 Նոյեմբերի, թ. 1738։

Կոնդակ օրհնութեան տաճկահայ հրապարակախօս Մկրտիչ Փորթուգալեանի անունով Նորա գրական գործունէութեան յոբելեանը կատարելու առթիւ, ուղարկելով մի հարիւր ռուբլի նուէր Վեհափառ Հայրապետի կողմից։ 12 Նոյեմբերի, թ. 1749։

Կոնդակ Երևանի թեմական դպրանոցի Հոգաբարձութեան անունով, որով արտօնուեց կարգադրել կատարել դպրանոցի 75-ամեայ յոբելեանը առաջիկայ 1914 թ. հոկտեմբերին։ 12 Նոյեմբերի, թ. 1750։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի ս. Սինոդին, համաձայն Երևանի Հայոց Հո-

գևոր դպրանոցի Հոգաբարձութեան խնդրի, միջնորդել Կովկասի Տ. Փոխարքայի առաջ արտօնութիւն ձեռք բերել, մի տարի ժամանակով, Փոխարքայութեան սահմաններում հանգանակութիւն կատարելու Դպրանոցի 75-ամեայ յոբելեանը յաւերժացնելու համար, որ կատարուելու է 1914 թ. հոկտեմբերին: 12 նոյեմբերի, թ. 1750:

Կոնդակ օրհնութեան Ս. Պետերբուրգի Հայոց Եկեղեցական Խորհրդի նախագահի և անդամների անունով՝ դպրոցական ֆոնդի օգտին միանուագ հինգ հազար (5000) ռուբլի և տարեկան, տասն հազար (10000) ռուբլի նուիրաբերելու մասին: 12 նոյեմբերի, թ. 1753:

Կոնդակ օրհնութեան Մոսկուայի Հայոց Եկեղեցական Խորհրդի և անդամների անունով՝ դպրոցական ֆոնդի օգտին միանուագ երեք հազար (3000) ռուբլի նուիրաբերելու մասին: 12 նոյեմբերի, թ. 1754:

Կոնդակ Կոստանդնուպօլսոյ Հայոց Միացեալ Ընկերութեան անունով՝ նորա ազգօգուտ գործունէութեան առթիւ, առանձնապէս Տաճկահայոց դպրոցական ասպարիզում: Ուղարկուեց մի հարիւր ռուբլի նպաստ Վեհափառ Հայրապետի կողմից: 14 նոյեմբ., թ. 1755:

Կոնդակ Ամերիկահայոց առաջնորդ Տ. Արսէն Ծ. վարդապետ Վեհունու անունով, որով յանձնարարուեց այցելել Ամերիկայում բնակուող ժողովրդին և մխիթարել նոցա հոգեպէս և բարոյապէս: 14 նոյեմբերի, թ. 1756:

Կոնդակ Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի անունով, որով առաջարկուեց ստանալ Սև-Քարեցի Սոնա Վարդանեանից ծխական դպրոցի օգտին խոստացած մի հարիւր ռուբլին և թոյլ տալ մահից յետոյ թաղել նորա դիակը տեղական եկեղեցու գաւթում: 15 նոյեմբերի, թ. 1760:

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Նոր-Նախիջևանի Դպրոցական դրամագլխի ժողովման Յանձնաժողովի նախագահ բժշկապետ Անդրէաս Սալթիկեանի և ան-

դամներ՝ պ. պ. Գրիգոր Փ. Զալխուշեանի, Մովսէս Բեր-բերեանի, Գէորգ Զուբարի, Տ. Գէորգ քահանայ Փելլէ Շահինեանի, տիկին Դշխուհի Անպէտքեանի, Բրաբիոն Սա-դիրեանի, Սրբուհի Սլաճալեանի, Ոնոփրիոս Անպէտքեանի, Դաւիթ Խոջայեանի, Փերոմբէ Պապովի, Գրիգոր Փիսոեանի, Երուանդ Շահ-Ազիզի, Յովհաննէս Շլթեանի, Գէորգ Սլա-խանեանի, Յովհաննէս Շապոշնիկեանի, Կարապետ Խոջա-յեանի, Սերոմբէ Զաթալբաշեանի, Գէորգ Ռէիզեանի, Սա-հակ Թոփալեանի, Արշակ Գնունու, Գէորգ Ունանեանի, Յակոբ Միրզոյեանի, Պետրոս Թիթրեանի, Ատուաձատուր Գենջօղլուեանի, Յոփնան Յոփնանեանի, Տ. Մարտիրոս աւագ քահանայ Գանձապետեանի, Պօղոս քահանայ Բէգելեանի և Մկրտիչ քահանայ Տէր-Յակոբեանի անունով, որոնք օգնել են Դպրոցական Ֆոնդի յաջողութեան Նոր-Նախի-ջևան քաղաքում, չխնայելով իրենց աշխատանքը։ 14 Նո-յեմբերի, թ. 1765։

Կոնդակ օրհնութեան Կարապետ Խոջամիրեանի անու-նով՝ Տաթևի շրջանի Կաւարտ գիւղի ծխական դպրոցի օգտին տարեկան 400 ռուբ. նպաստ տալու առթիւ։ 15 Նոյեմբ., թ. 1768։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Ամերիկայի Հայոց առաջնորդ Տ. Արսէն ծ. վարդապետ Վեհունուն հոգալ Ամերիկայի Արժէնթինի հայ ժողովրդի հոգևոր պէտ-քերը։ 16 Նոյեմբերի. թ. 1780։

Կոնդակ օրհնութեան Արմաշու Դպրեվանքի փոխ-վա-նահայր և վերատեսուչ Տ. Մեսրոպ եպիսկոպոս Նարոյեանի անունով՝ Վանական դպրոցի կատարած հանրօգուտ գոր-ծունէութեան առթիւ։ 17 Նոյեմբերի, թ. 1791։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին որ և է կերպով աւարտել տալ Դիւլաքարակ գիւղի ծխական դպրոցի կի-սատ մնացած շինութիւնը։ 19 Նոյեմբերի, թ. 1797։

Կոնդակ Աղէքսանդրապոլի գաւառի Իմրխան գիւղի

ծխական Հոգաբարձութեան անունով, որով թոյլատրուեց տեղական եկեղեցու բակում դպրոց բանալ, իւր որոշման համաձայն։ 19 Նոյեմբերի, թ. 1800։

Կոնդակ նոյն իմաստով Աղէքսանդրապօլի գաւառի Ղափլու գիւղի ծխական Հոգաբարձութեան անունով՝ ծխական դպրոց բանալու մասին։ 19 Նոյեմբերի, թ. 1801։

Կոնդակ Աղէքսանդրապօլի գաւառի Նոր-Արթիկ գիւղի ծխական Հոգաբարձութեան անունով, որով արտօնուեց տեղական եկեղեցու գաւթում ծխական դպրոց բանալ՝ իւր որոշման համաձայն։ 19 Նոյեմբերի, թ. 1802։

Կոնդակ նոյն իմաստով Աղէքսանդրապօլի գաւառի Զարնջի գիւղի ծխական Հոգաբարձութեան անունով՝ ծխական դպրոց բանալու մասին։ 19 Նոյեմբ., թ. 1803։

Կոնդակ ս. Էջմիածնի ս. Սինոդի անունով, որով ուղարկուեց Բագուեցի Հանգուցեալ Կարապետ աղա Լալայեանի կտակի վաւերական պատճէնը։ 25 Նոյեմբ., թ. 1831։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Աթոռի տպարանի Վարչութեան ուղարկել Գանձակի փոխանորդի միջոցով՝ Բաղաձոր գիւղի եկեղեցուն մի օրինակ Աւետեաց ժամագիրք, մի Տօնացոյց, մի Աւետարան և մի Իւղաբերից Աւետարան։ 26 Նոյեմբերի, թ. 1836։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի ս. Սինոդին ի կարգ հրաւիրել Շուշեցի Իգնատիոս քահ. Տէր-Գրիգորեանին և նախազգուշացնել նորան, որ չթափառէ։ 26 Նոյեմբերի, թ. 1838։

Դիւանի գրութեամբ ծանուցուեց Կիլիկիայի Հայոց կաթուղիկոսական Դիւանին, որ համաձայն Նորին Վեհափառութեան ամենայն Հայոց Հայրապետի որոշման, կարող են Սսոյ վիճակից, 1914 թ. երկու պատրաստուած աշակերտ ուղարկել Մայր Աթոռի Գէորգեան Հոգևոր ճեմարան ընդունելու համար։ 27 Նոյեմբերի, թ. 1848։

Նորին Սրբութիւնը Ատրպատականի թեմի Հայոց ա-

ռաջնորդ Տ. Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանի նոյեմբերի 6-ի թ. 841 յայտարարութեան վրայ հետևեալ մակագրութիւնն է արել. «Պատուիրում ենք ս. Էջմիածնի ս. Սինոդին, համաձայն Ատրպատականի Հայոց թեմական առաջնորդի կրկնակի թախանձանաց, կարգադրել ուղարկել Մայր Աթոռի գանձարանից, Ատրպատականի առաջնորդարանի միջոցով, ամսական 30-ական ռուբլի՝ Ուրմիայի Հայոց փոխանորդ Տ. Խորէն վարդապետ Լազարեանին մի տարի ժամանակով»: 29 նոյեմբերի, թ. 1856:

Կ. Պոլսոյ Տիկնանց Դպրոցասէր Ընկերութեան յօգուտ կրթական գործի մի հարիւր ռուբլի նուէր վեհափառ Հայրապետի կողմից:

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

1 նոյեմբերի, թ. 593. Սինօդը՝ Մայր Աթոռի կալուածոց կառավարչի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կառավարչին Գանձասարի կալուածում գտնուող «Աշմանա» հողերից 400 դեսեատին վարձով տալ Շուշույ գաւ. Քարագլուխ գիւղացիներին երկու տարի ժամանակով, տարեկան 550 ռուբ. վարձով, պարտաւորեցնելով գիւղացիներին տալ Մ. Աթոռի օգտին նաև բոլոր բերքերի մասը:

1 նոյեմբ., թ. 594. Սինօդը՝ Ղարաբաղի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային վճարել թեմի Պտկի ս. Գէորգ վանքի վանահայր Գրիգոր քհնյ. Սարգսեանին վիճակային արդիւնքից ամսական 10 ռուբլի ռոճիկ:

1 նոյեմբ., թ. 597. Սինօդը՝ լսելով Ատրախանի կոնսիստորիայի այս տարուայ սեպտեմբ. 9-ի, № 2925, յայտարութիւնը, որոշեց. հաստատել նոյն կոնսիստորիայի որոշումը, որի համաձայն Ստաւրոպոլի նահ. Ս. Խաչ քաղաքի երեք քահանաները հերթով պէտք է հսկուեն Ստաւրոպոլի շրջակայքում գտնուող Թուրքմենական, Լիտնայեա Ստաւկա և Օվօշշի վայրերի հայերին: